XXIII

ՆՈՐ-ԴԱՐ

XXIII

№10 Շաբաթ, 21 Յունուարի

1883 — 1906

Շաբաթ, 21 Յունուարի №10

Բաժանորդագինը փոստի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., ամիսը 1 ր., հատը՝ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։
Խմբագրութեան գրասենեակը՝ Գրիբոեդովսկայա փողոց, տուն № 14.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար առանձին համաձայնութեամբ։ Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է։

1906
ՆՈՐ-ԴԱՐ

(ՔՍԱՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Սոյն 1906 թուին լոյս կըտեսնի քաղաքական-գրական ամենօրեայ «Նոր-Դար»-ը նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։

Ամբողջ ռուս կայսրութեան մէջ «Նոր-Դար»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ր., վեց ամսուանը՝ 6 ր., ամսականը՝ 1 ր., հատը՝ 5 կ.։ Արտասահմանի բաժանորդը վճարում է տարեկան՝ 40 ֆրանկ, վեց ամիսը՝ 25 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և օտար լեզուներով, բառը 2 կ., առաջին երեսումը 4 կ.։ Շատ անգամ կրկնւող յայտարարութիւնների համար մեծ զիջումն։

Բաժանորդ գրւում են Թիֆլիսում՝ «Նոր-Դար»-ի գրասենեակում, Գրիբոեդովսկայա փողոցում, № 14.

Պօստայ «Նոր-Դար»-ի հասցէն՝ Тифлисъ, ред. „Норъ-Даръ", կամ՝ Tiflis (Caucase), rédaction «Nor-Dar».

Ծանուցում.—Թերթիս խմբագիրը մի տարի առաջ Պետերբուրգում իրաւունք է ստացել ընդարձակելու թերթի ծրագիրը, տալով թերթի մէջ պատկերներ, և առանձին ծրագրով լոյս հանելու շաբաթական պատկերազարդ յաւելուած։ Հարկ ենք համարում ծանուցանելու՝ հէնց որ թերթի միջոցները ներեն, կըձեռնարկենք պատկերազարդ «Նոր-Դար»-ի հրատարակութեան և կուղարկենք «Նոր-Դար»-ի բաժանորդներին 10 ռուբլի բաժանորդագնի հաշւում։

Արամ և Սիմեոն Տէր-Խաչատրեանները ցաւօք սրտի յայտարարում են իրենց հօր՝

ՍԻՄԷՕՆ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Գանձակ քաղաքում, յունուարի 18-ին։

Թաղումը տեղի կունենայ յունուարի 22-ին, կիրակի օրը։

(103) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ.— Ինչո՞ւ մեր երկիրը չի խաղաղւում։
Հայ-Թրքական կռիւը։
Վերջին դէպքերը Զանգեզուրի գաւառում։
ՔՐՈՆԻԿՈՆ.—Թիֆլիս։ Գաւառ։ Ռուսիա։
ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ։
ՔԱՂԱՔԱԿԱՆ.— Ռուսական յեղափոխութեան արձագանքները։
ՀԵՌԱԳՐՆԵՐ,
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Թիֆլիս, 20 յունուարի 1906 թ.

ԻՆՉՈ՞Ւ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ՉԻ ԽԱՂԱՂՒՈՒՄ

Ա.

Քանի և քանի զինուորական նահանգապետներ, զօրապետներ և ընդհանուր նահանգապետներ գնացին արեան ու արցունքի վայրերը՝ Գանձակ, Շուշի, Զանգեզուրի գաւառը... երկիրը խաղաղեցնելու առաքելութեամբ։ Մէկին յաջորդեց միւսը, սրան՝ երրորդը, չորրորդը, բայց երկիրը ոչ միայն չխաղաղւեց, այլ հայ-թրքական յարաբերութիւններն աւելի բարդւել են, կատաղութը շարունակւում է, երկիրն աւերւում, հարիւր տարիների կուլտուրայի արդիւնքը ոչնչանում, բնակչութեանը սով է սպառնում, որին պիտի հետևեն տարափոխիկ հիւանդութիւններ։

Չխաղաղւեց մեր երկիրը. ինչո՞ւ շարունակւում է հայ-թաթարական ընդհարումը։

Ով ինչ պէս գիտէ և հասկանում է թող պատասխանէ այդ հարցմունքին, բայց ամենևին չենք սխալւի, և ամենքն էլ կը համաձայնւեն մեզ հետ, եթէ ասենք, որ երկիրը խաղաղեցնելու առաքելութեամբ ուղարկւած զինուորական պաշտօնեաների աշխատանքը, գործն ապարդիւն անցաւ մինչև օրս։

Բայց պիտի տես, թէ ինչքան ծախս է արել պետութիւնը դրանց վրայ, ինչքան թանկ ժամանակ է կորել, ինչքան անմեղ արիւն հոսել, ինչքան շէն գիւղեր աւերւել, ինչքան մարդիկ թշւառացել, հետևաբար ինչքան նիւթական փասների, հազար ու մի դժուարութեանց և հոգացողութեանց զոհեր են բացւում կառավարութեան համար ապագայում։

Խաղաղարար գեներալների, զինուորականների անյաջողութիւնը գլխաւորապէս մենք վերագրում ենք այն հանգամանքին, որ դրանցից իւրաքանչիւրը պաշտօնի մտնելով գնացել է իր նախորդի ընտրած ճանապարհով, միայն այն զանազանութեամբ, որ յետոյ գնացողը իր նախորդից աւելի եռանդով և աւելի առաջ է գնացել մի անգամ ընտրած ճանապարհով։

Տակայշվիլուց ամենքը գանգատւում էին, նրան էին վերագրում Գանձակի կոտորածը։ Նրան հեռացրին։ Բայց նրանից յետոյ ինչ որ կատարւում է, կարծես թէ կատարւում է նրա համար, որպէս Տակայշվիլին ասէ. «Էհ. ինձ դէմ էիք, ինձ չկամեցաք դուք, ապերախտ հայեր, ինձ կը յիշէք իմ յաջորդի օրով»։

Եւ արդարև, ինչ որ մենք լսում ենք, ինչ տեղեկութիւններ որ ստանում ենք Գանձակի նահանգից, Իվան Երաստովիչ ֆոն-Օզերովսկու մասին, ոչ թէ Տակայշվիլուն յիշում ենք, այլ մոռանում ենք նրան։

Օզերովսկու ետևից գնացել է գեներալ Գոլոշչապովը, որի մասին կանխաւ ասում էին Թիֆլիսում, թէ սա վճռած ունի երկու կողմն էլ անխնայօրէն ջարդելու, աւերելու, եթէ դրանք իրենք չըշտապեն իրենց միջև հաշտութիւն կայացնել։

Տիրող դրութեան մէջ հայն ու թաթարն ինչպէս պէտք է իսկոյն հաշտւէին։ Եւ միթէ ճանապարհի վրայ ու ճանապարհից դուրս գտնուող գիւղերը ռմբակոծելով, սրի անցկացնելով է որ կարելի պիտի լինի երկիրը խաղաղեցնել։

Աւերել և մոխիր դարձնել կարելի է, բայց այդ միջոցներով երկիր խաղաղեցնել չի կարելի. դրան որպէս ապացոյց իւրաքանչիւր գեներալի համար՝ իւր նախորդի կատարած գործի արդիւնքը։

Արդարև եթէ այդ ճանապարհով կարելի լինէր խաղաղարար առաքելութիւնը յաջողութեամբ պսակել, այն ժամանակը յետոյ գնացող գեներալ չէր լինիլ և, եթէ գնար էլ, այլևս բան չէր ունենալ կատարելու, որովհետև երկիրը խաղաղւած կը լինէր։

Այն ամենը, որ տեղական թերթերում լոյս են տեսել, այն ամենը, որ մենք հրատարակել ենք ֆոն-Օզերովսկու մասին, եթէ ճշմարիտ է, մեզ թէ խորապէս յուզում է և թէ մեծ վիշտ է պատճառում, քանի որ մենք խաղաղարար առաքելութիւնից արդարութիւն էինք սպասում, որով միայն վերջ կը տրւի հայ-թաթարական ընդհարման։

Իսկ թէ ֆոն-Օզերովսկու դէմ գանգատը հիմք ունի, այդ երևում է նրանից, որ նա հայերի դէմ է և այն աստիճանի, որ չի կամեցել Շուշի հասնելով հայերի հետ տեսնւել, չընդունելով հայերի հրաւէրը, այլ գնացել և իջել է թաթարների մօտ։

Բարձր իշխանութիւնից խաղաղութիւնը վերականգնելու առաքելութեամբ ուղարկւած զինուորական պաշտօնեաներն այդպիսով ոչ թէ չեն խաղաղեցնում երկիրը, այլ հայ-թաթարական ընդհարման աւելի զարկ են տալիս։

Դրանց ամենքի մեծ սխալն այն է (ինչից գրւած այդ այլ խնդիր է), որ իւրաքանչիւր պաշտօնեայ իւր նախորդի ճանապարհովն է գնում, ինչպէս վերն ասացինք, իսկ միւս մեծ սխալն արդէն սկզբից է կատարւում։

Բանն այն է, որ արտաքին թշնամու դէմ կարելի է ուղարկել գեներալներ, իսկ երկրի մէջ, քաղաքներում միմեանց հետ բնակւող ժողովուրդների միջև ծագած շփոթութեան, ընդհարումների վերջ տալու համար, եթէ միայն ճշմարիտ ցանկանում ենք այդ, գեներալներն անյարմար են. պէտք է ուղարկել ադմինիստրատոր պաշտօնեայ, և այն՝ լուրջ, հեռատես և քիչ շատ սրտով և հոգով հարուստ ցիվիլ պաշտօնեայ, որ ապրել է ժողովրդի մէջ և ի մօտոյ ճանաչում է ժողովուրդը, նրա հոգեբանութիւնը։

Ոչ թէ արիւն սիրող, այլ և բարեխիղճ գեներալն, իսկ նրա աչքում քաղաքը զօրանոց է երևում, քաղաքացիները՝ զինւորներ, իւրաքանչիւր տուն, որտեղ խըմբւած են քաղաքացիներ, մի մի ամրոց։

Մենք դեռ չվերջացրինք։

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԿՌԻՒԸ

ԳԱՆՁԱԿԻՑ «Պետ. գործ.»-ը հեռագրում են յունուարի 18-ից.

«Հայ-թրքական թշնամութիւնն առանձին սաստկութեամբ արտայայտւեց Զանգեզուրի գաւառում, որտեղ տեղի է ունենում փոխադարձ ոչնչացում։ Շուշու ճանապարհը փակ է։ Կենսական մթերքների մեծ պակասութիւն կայ։ Երևան է եկել դիֆթերիտ. հիւանդները մեռնում են առանց բժշկական օգնութեան»։

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են.— Անցեալ տարուայ վերջերին և այս տարուայ սկզբներին Թուրքերի կողմից հայերի վերաբերմամբ կատարւած մի քանի անհատական սպանութիւնները, չնայելով ընդհանուր յուզման, խոշոր ընդհարումների պատճառ չեղան շնորհիւ հայերի կողմից ձեռք առնւած ամենաեռանդուն միջոցների։ Առ այժմ արտաքին խաղաղութիւն է տիրում, և հայ-թրքական յարաբերութիւններն սքօղւած են մի տեսակ խորհրդաւոր լռութեամբ։

Յունուարի 20-ին, առաւօտեան ժամը 11-ին, ստացւեց հետևեալ հեռագիրը։ —Հայ և Թուրք ներկայացուցիչները Եւլախում ստորագրեցին հաշտութեան պայմանագիրը, որով Եւլախից մինչև Շուշի երթևեկութիւնն ազատ է։

Տեղական լրագրներում հրատարակւած է մի խումբ Թուրքերի հետևեալ նամակը.

«Այս օրերս լրագիրներում տպւած էր բագուեցի հարուստ Հ. Զ. Ա. Թաղիևի մի նամակը, ուղղւած Շէյխ-Ուլ-Իսլամին, ուր նա խնդրում էր յետաձգել հայ-թրքական կովկասեան համաժողովը, որը հրաւիրւում է կովկասի փոխարքայի կողմից՝ հայերի ու Թուրքերի միջև առաջացած ցաւալի ընդհարումներին վերջ տալու նպատակով անհրաժեշտ միջոցները մշակելու։ Գ. Թաղիևն իւր այդ առաջարկը պատճառաբանում է նրանով, որ ներկայ ձմեռային եղանակի պատճառով գաւառներից կանչւած մարդիկ չեն կարող Թիֆլիս հաւաքւել, եթէ մուսուլմանների ներկայացուցիչները գնալու են Պետերբուրգ ռուսական համիսլամական ժողովին մասնակցելու համար։ Գ. Թաղիևի այդ յայտարարութիւնն ընդունակ է միայն ներկայացնելու աշխարհի բոլոր մուսուլմանների տրամադրութիւնը, որը, սակայն, չի կարող համապատասխանել ոչ էլ իրերի իսկական դրութեան և ոչ էլ մեր բազմատանջ երկրի մէջ խաղաղութիւնը հնարաւոր եղած չափով արագ վերականգնելու շահերին։ Ձմեռային եղանակը չի կարող երբեք որպէս արդարացուցիչ պատճառ ծառայել մարդկանց Թիֆլիս չգալուն, երբ դրանից է կախւած երկու եղբայրակից ազգութիւնների միջև ծագած թշնամական յարաբերութիւններին վերջ տալը, որոնք այնքան խիստ կերպով ազդում են այդ յարաբերութիւնների անբնական վիճակի մէջ գտնուելուց։ Պետերբուրգում տեղի ունենալիք համիսլամական համագումարի մասին Թիֆլիսում ոչ ոք ոչինչ չգիտէ։ Ինչպէս երևում է, այդ համագումարն սկի համիսլամական էլ չէ, հակառակ պարագայում նա չէր կարող տեղի ունենալ առանց Թիֆլիսի մուսուլմանների գիտութեան, առանց մուսուլմանական բարձրագոյն հոգևորականութեան ներկայացուցիչների, գլուխ ունենալով իրենց Շէյխ-ուլ-Իսլամին և Մուֆթու Թէև ընդունենք էլ, որ Պետերբուրգի համագումարը համիսլամական լինի, այնուամենայնիւ նա կարող է քաղաքական միայն լինել։ Եւ միթէ կարելի է, որ քաղաքական վիճաբանութիւններն արգելք կարողանան դառնալ կովկասեան հայ-թրքական համաժողովին,* որի յաջողութիւնից է կախւած հայերի ու Թուրքերի միջև հաշտութեան հաստատումն ու սոսկալի աղէտների առաջն առնելը։ Մանաւանդ որ Պետերբուրգ գնացած անձերի թւում մէկ կամ երկու հոգի միայն կան, որոնք հրաւիրւած են կովկասեան հաշտարար համագումարին։ Կովկասեան համագումարը հրաւիրւում է երկրի բարձրագոյն իշխանութեան նախաձեռնութեամբ։ Մուսուլմաններից չէ կախւած նրա յետաձգումը. եթէ նրանցից կախւած լինէր այն, նրանք երբեք էլ այնքան վճռողական կերպով չէին մերժիլ այն։ Մուսուլման ամբողջ ժողովուրդ անյետաձգելի պահանջ է զգում կովկասեան խաղաղարար համաժողովի՝ կայացնելու համար այնքան ցանկալի խաղաղութիւն երկու ազգերի միջև, որոնք սահմանւած են միմեանց հետ բարեկամաբար ապրելու, որոնք այսօր միմեանց դէմ մղւած են անմիտ մի կռիւ։ Թիֆլիսի մի խումբ մուսուլմաններ. հոգևոր կառավարութեան անդամ Փուլադ-Զադէ Խանբուդաղով, Հասան-Զադէ, Գ. Կասիմով, Մամեդաղա Շահթախթինսկի, Համզա-բէկ Եզվաղխանբէկով»։*)

*) Սոյն նամակի մասին մեր ասելիքները թողնում ենք յաջորդ համարին։

Խմբ.

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՒԱՌՈՒՄ

ԳԷՕՐԻՍ, 7 յուն.—Առաջ ենք բերում մեր գաւառի վերջին դէպքերի համառօտագրութիւնը։

Սիսիանի Թուրքերը մեծ յարձակում գործեցին հայ գիւղերի վրայ, սպանեցին շատ հայեր, թալանեցին շատ ապրանքներ, կրակեցին խոտի դէզեր։ Հայերը հնար եղածին չափ դիմադրութիւն էին ցոյց տալիս, և Թուրք հրոսակախմբերին էժան չնստեց իրենց ասպատակութիւնը։

Դեկտ. 17-ին Գեօրիսից 20 կազակ գնում են Թուրք Աղուտի գիւղն իրենց ապրանքը գերեցի 8 հայերի ձիերին բարձած։ Աղուտեցիք յարձակւում են կազակների վրայ. սպանւում է 8 հայերից մէկը՝ Խաչի Ստեփանեան։ Կազակները, բեռները թողնելով, մնացած ձիապան հայերի հետ փախչում են հայ Ղարաքիլիսա գիւղը, ու եղելութիւնը պատմում են կազակների սպային։ Վերջինս մի հարիւրեակ կազակներով գնում է աղուտեցիներին պատժելու. աղուտեցիք հարիւրեակին դիմաւորում են հրացաններով, դաշոյններով և քարերով։ Սպան հրամայում է կրակել. սպանւում է 30 Թուրք, որից յետոյ միայն աղուտեցիք հնազանդութիւն են յայտնում։ Սպայի պահանջմամբ նրանք վերադարձնում են թալանածի մի մասը՝ 900 ր. փող, 600 պուդ խոտ, 300 պուդ գարի, բանկային տոմսեր 2224 ր. արժողութեամբ և 500 հատ փամփուշտ, իսկ մնացածի արժէքն են տալիս։

Սպան իւր հարիւրեակով հեռանում է թէ չէ, աղուտեցիք ուրիշ տեղերից եկած Թուրքերի հետ յարձակւում են հայ գիւղերի վրայ։ Հայերը նորից զօրեղ դիմադրութիւն են ցոյց տալիս. կռուի ժամանակ ընկնում է քաջամարտիկ Ռուբէն Ստեփանեանը 22 հոգու հետ։ Աղուտեցիք դիմում են Շահսովար-բէկի օգնութեան. վերջինս, հաւաքելով 4—5 հարիւր Թուրքեր, աղուտեցոց և դարաբասցի Թուրքերի հետ յարձակւում է Դարաբասում ապրող 50 տուն հայերի վրայ, որոնցից Մկրտիչ քահանայի գլուխը կտրում են, տանում և սպանում են մի կնոջ իւր որդու հետ։ Հայերը կոտորում են դարաբասցի Թուրքերից 236 հոգի։ Ինքնապաշտպանութեան խումբը դարաբասցի հայերին տեղափոխում է հայ Գետաթաղ գիւղը, թաթարների նոր արշաւանքից նրանց ազատ պահելու համար։

Դեկտ. 26-ին խողնավարցի հայերից երկուսը՝ Մեսրոպ և Սարգիս գօրիսեցի հայերից մի քանիսի հետ գնում են խոտ ու դարման բերելու. Թուրք խողնավարցիները յարձակւում են և Մեսրոպին ու Սարգսին գերում իրենց գրաստների հետ. ուղեկից գօրիսեցիները փախչելով գալիս են հայերին յայտնում եղելութիւնը. հայերը շտապում են և Թուրքերին հալածում մինչև Հաջիլար Թուրք գիւղը։ Միւս կողմից դուրս է գալիս Նաղի անունով Թուրք աւազակապետն իւր խմբով, Դարջուղարա անուանւած տեղից քշում է գօրիսեցիների 76 տաւար և շատ տաւար էլ մօտակայ Բարաղլուխ հայգիւղից. քշւած ապրանքի մի մասը տանում են Աբուլար, իսկ միւս մասը Հօչաս Թուրք գիւղը։ Բաշլարի կռուի ժամանակ մի քանի անզէն հայեր իրենց գլուխն ազատելու համար մտնում են իրանց մի բիւլայի տունը, վերջինիս հրաւիրանքով. բիւլայի կինը դիմաւորում է նրանց դաշոյնով, որով աջ ու ձախ հարւածում է. հետևանքն այն է լինում, որ այժմ այդ միամիտ հայերը վիրաւոր պառկած են անկողնում։

Դեկ. վերջերին հաջիսամլուեցի Թուրքերը սև ու կանաչ դրօշակներով դիմում են դէպի Ղարաղշլաղ. ճանապարհին Ջիջիմլու երկու գիւղերի Թուրքերի հետ միացած քշում տանում են Տեղ գիւղի հայերի 200 ոչխարը։ Գեօրիսեցի և Խնձորեսկի հայերը վրայ են հասնում և պահանջում են ջիջիմլուեցի Թուրքերից տաւարը յետ տալ. Թուրքերը հակառակւում են, և սկսւում է կռիւը. Թուրքերը յաղթւում են և երկու Ջիջիմլուն էլ խառնի պատժւում են հայերի ձեռքով իրենց աւազակութեան համար։ Թուրքերին օգնութեան են հասնում կազակները, որոնք զինաթափ են անում 70 հայերի, բայց ի նկատի ունենալով որ հայերը կռւում են Թուրքերի աւազակութեան դէմ, նրանց զէնքերը երեք օրից յետոյ յետ են տալիս։

Այս բանից յետոյ Թուրքերն էլ չեն խրատւում. կազակների օգնութիւնից խրախուսւած՝ նրանք, նորից սև ու կանաչ դրօշակները պարզած, արշաւում են Ղարաղշլաղի վրայ, սակայն այստեղ եւ փառաւոր ջարդ են կրում և փախչում, թողնելով 50 հոգի սպանւած։ Այդ կռւում ընկնում է, ի միջի այլոց, հրոսակախմբի առաջնորդ հօջասեցի մոլլա-Ջաւադ Կեօյուշը։

Յուն. 2-ին Թուրքերը յարձակւում են Երիցաթմբի վրայ և 4 դիակ թողնելով փախչում։

Թուրքերը կտրատում են հեռագրի թելերը. պոստը շատ անգամ չի գալիս, Թուրքերը կողոպտում են։ Մեծ պակասութիւն կայ թէյի, շաքարի, ծխախոտի. շաքարի ֆունտը ծախւում է 1 ռուբլով։ Սակայն հացն ու միսը մատչելի են առ այժմ. հացի ֆունտն արժէ 4 կ., կաշի չկայ կօշիկ կարելու։ Թուրքերն ամեն ինչ թալանում են ճանապարհին, և կառավարութիւն չկայ, որ այս աւազակութեան, էլ չենք ասում խմբական մարդասպանութեան, առաջն առնէ։ Սա կեանք չէ, սա դժոխք է... Սակայն, մենք չենք յուսահատւում. ապաւինած մեր թարմ ուժերին և մեր հայկական բնածին կենսունակութեան՝ մենք մեծ յոյսեր ունենք ապագայի վրայ...

Լուսնթագ

ՔՐՈՆԻԿՈՆ

ԹԻՖԼԻՍ

Յունուարի 21-ին, վեհ. կաթողիկոսը բարեհաճում է վերադառնալ ս. Էջմիածին։ Արդէն կարգադրւած է վագոն-սալոն պատրաստել։ Եթէ վագոն-սալոնը պատրաստ չլինի, Նորին Ս. Օծութիւնն այս շաբաթ կը մեկնի։

— Գեներալ Մալաման ընդհանուր-նահանգապետի պաշտօնը կատարելիս իրաւունք էր տւել քաղաքի զանազան մասերում առանձին տեղեր հիմնելու, ուր տարւում էին փողոցային անկարգութիւնների ժամանակ վիրաւորւած մարդիկ նրանց վէրքերը կապելու համար։ Այժմ այդ տեղերը, գեն. Մալամայի կարգադրութեամբ, փակւած են, և նորից բանալու համար քաղաքային վարչութիւնը պէտք է թոյլտւութիւն խնդրի նոր ընդհանուր նահանգապետ գեն. Տիմոֆէևից։

—Ընդհանուր նահանգապետի հրամանի համաձայն, զէնք կրելու և պահելու թոյլատրական այն վկայականները, որոնք տրւած են մինչև յունուարի 18-ը, զօրութիւն չունեն և պէտք է այդպիսի վկայական ունեցողները նորից թոյլտւութիւն խնդրեն ներկայացնելով իրենց ունեցած վկայականները, որոնց վրայ, եթէ նորից թոյլտւութիւն տրւի, առանձին կնիք կը խփւի ընդհանուր նահանգապետի գլխատանը։

—Ընդհանուր-նահանգապետին յունուարի 19-ին ներկայացել են Թուրք բէկեր, պատգամաւորներ և խնդրել, որ իրենց թոյլ տրւի զէնք կրելու։ Ընդհանուր-նահանգապետը, ,,Յանաջ''-ի ասելով, առանց այլևայլի մերժել է և հրամայել է, որ անյապաղ զէնքերը յանձնեն ուր հարկն է։

—Ընդհանուր-նահանգապետը մի նոր պարտադիր որոշումով առաջարկւում է ոգելից խմիչքներ ծախողներին անյապաղ վերցնել հարկաւոր վկայականները և պատենտները, հակառակ դէպքում նրանք կենթարկւեն բանտարկութեան մինչև 3 ամիս ժամանակով կամ տուգանքի մինչև 3000 ր.. Նրանց ժամանակ է տրւում մինչև փետրուարի 10։

— Հայ-թաթարական ընդհարումների պատճառները պարզելու համար փոխարքայի խորհրդին կից գումարւելիք համաժողովին մասնակցելու համար հայոց կողմից ընտրւած են՝ Բաքւում—Կ. Խատիսեան, Ս. Թաղիանոսեան և Կաճկաճեան, Երևանում—քաղաքագլուխ Մելիք-Ազարեան, Գ. Կամսարական և երդ. հաւ. Գ. Տէր-Խաչատրեան, Գանձակում—բժ. Մելիք-Բէգլարեան, Խաչեան և Լազարեան, Նախիջևանում—Մեսրոպ վարդապետ և Լ. Սարգսեան, Կարսում—Եղիշէ վարդապետ, Ալեքսանդրապոլում—քաղաքագլուխ Տէր-Պետրոսեան, Նուխում — Ռուստամ-բէկ Մելիքեան, Շամախում— Մեհրաբեան և Ղազախում—երդ. հաւ. Ս. Յարութիւնեան։

—Հայ-թաթարական խաղաղարար յանձնաժողովը յունուարի 18-ին ունեցած նիստում որոշեց խնդրամատոյց լինել, որ փոխարքայի խորհրդին կից գումարւելիք հայ-թաթարական համաժողովի անդամների թիւն աւելաց-

նուի թէ հայերից և թէ թուրքերից:

— Յունուարի 19-ին, կէս օրուայ ժամը 12-ին, դարձեալ հրացանաձգութիւն եղաւ քաղաքիս Թրքական մասում: Բոլոր խանութները փակուեցին, և ժողովուրդն սկսեց փախչել: Մի ոստիկան յայտնեց, որ ինքը սխալմամբ է հրացան արձակել:

— Յունուարի 21-ին տեղի ունեցաւ քաղաքիս հայոց եկեղեցիների կալուածների վերջնական յանձնումը:

— Թիֆլիսում ապրող պարսկահպատակները, «Т. Л.»-ի ասելով, մտադիր են կառավարութիւնից խնդրել, որ պարսից հիւպատոսարանը քաղաքի հրապական մասից տեղափոխուի սախական մասը, որովհետև նրանց համար անյարմար և երբեմն էլ անկարելի է լինում հաղորդակցութիւն ունենալ հիւպատոսարանի հետ անհրաժեշտ ժամանակ:

—Յունուարի 18-ին Թիֆլիս կայարանի վրայով անցաւ դէպի Նաւթլուղի կայարանը Բաթումի կողմերից եկած մի գնացք բաղկացած երկու վագոնից, որոնց մէջ կալանաւորներ կային: Այդ գնացքը Թիֆլիս կայարանում կանգ չառաւ:

— Յունուարի 16-ի գիշերը, ժամը 10-ին, 10-րդ քաղաքամասում, Կվիրիլսկայա փողոցում, երեք անյայտ անձեր յարձակւում են տուն վերադարձող ժանդարմերական ենթասպայ Օմելչուկի վրայ և, խլելով ատրճանակն ու թուրը, չփախչում անյայտանում են:

—Յունուարի 10-ի երեկոյեան Ծայրագոյն Արևելքից երեք գնացքով Թիֆլիս հասան ռուս-ճապոնական պատերազմին մասնակցող զօրքեր իրենց սպաներով:

— Պետական բանկի Թիֆլիսի և Բագուի բաժանմունքների համար Պետերբուրգից ուղարկուած է առաջինի համար 10 և երկրորդի համար 7 միլիոն րուբլու ոսկի, արծաթ և թղթադրամ:

— Խմբագրութիւնս ստացաւ հետևեալ նորագոյն հրատարակութիւնները. 1) «Մանկական պարտէզ» (ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար), նոտաներով և նկարներով: Ս. Վ. Արղութեան - Երկայնաբազուկի, Թիֆլիս, 1905 թ., 223 մեծ. էջ, գինը 3 ր., 2) «Արդարութեան նշանակութիւնը կեանքի մէջ», Նիկ. Լալայեանցի, Թիֆլիս, 1906 թ, 15 մէջ, գ, 10 կ.

— Այս օրերս յանկարծամահ եղաւ ուսուցիչ Յարութիւն Ղարագեօզեան, որն իրաւունք էր ձեռք բերել Թիֆլիսում հայերէն ամենօրեայ մի թերթ հրատարակելու «Միութիւն» անունով:

ԳԱՒԱՌ

Այս օրերս, Բաթումի քաղաքային բանտի №12-ի մահուան դատապարտուած կալանաւորներին վերստուգած ժամանակ, երևան է հանուած գետնափոր անցք, որ պատրաստուած է եղել կալանաւորների ձեռքով փախուստ տալու նպատակով: Այդ անհետևանք կալանաւորներին անմիջապէս փոխադրում են ուրիշ տեղ և խիստ միջոցներ են ձեռք առնում որևէ փախուստի առաջն առնելու համար:

— Նոյն տեղի քաղաքային հիւանդանոցից փախել են բժշկութեան նպատակով այնտեղ տարուած երկու հիւանդներ, Քութայիսի նահանգի բնակիչ Սիլովան Իվանիաձէ և Վասիլիյ Շարաշիձէ, որոնք մեղադրւում էին Բաթումի ոստիկանապետի օգնական Սկվորցովի կեանքի դէմ սպանութեան փորձ անելում:

—«Правда» թերթը հաղորդում է, որ դեկտեմբերեան խառնակութիւնների ժամանակ Հիւսիսային Օսեթիայում խոշոր վնասներ են տեղի ունեցել: Այսպէս, յափշտակութեան են տրուած Սադոնեան արծաթի ու կապարի հանքերը, և առաջ եկած վնասները հասնում են երկու միլիոն րուբլու: Յափշտակութեան այդ դէպքերը տեղի են ունեցել դեկ. 18—20-ին, և կատարողները եղել են տեղացի ժողովուրդը: Այդ գումարի մէջ չէ մտնում այն մարդկանց ունեցած նիւթական կորուստները, որոնք այսպէս թէ այնպէս իրենց գործերով կապուած են եղել վերոյիշեալ հանքերի հետ:

— Վլադիկաւկազի շրջակայ գիւղերի մեծամասնութիւնն այնտեղ ուղարկուած զօրքի հրամանատարի ձեռքն է յանձնել դեկտեմբերեան ջարդի գլխաւոր հեղինակներին, զէնքը և թալանի մի մասը: Զօրքը զէնքի է դիմել միայն Նազիաու գիւղում, որտեղ բնակիչների յամառութեան պատճառով թնդանօթ է արձակուած, որը սակայն վնաս չի պատճառել: Թալանին մասնակցող գիւղերի վրայ մեծ տուգանքներ են դրուած:

—Թիֆլիսի գաւառի բնակչութիւնը դադարեցրել է կառավարչական և հասարակական հաստատութիւններին յայտարարած բօյկոտը և այժմ իր բոլոր կարիքների համար դիմում է այդ հաստատութիւններին:

—Զինուորական իշխանութեան ձեռքն անցած անդրկովկասեան երկաթուղիների Թիֆլիս-Կարսի գծի պահպանութիւնը յանձնուած է այդ գծի վրայ գտնուած գիւղերին: Գիծը փչացնող ամէն մի չարագործ բռնելու համար խոստացուած է տալ մինչև 500 ր. վարձատրութիւն:

—Անդրկովկասեան և Վլադիկաւկազի երկաթուղիների կայարաններում վագոն նստելիս ուղևորները խուզարկւում են, որպէս զի զէնք և պայթուցիկ նիւթեր չտեղափոխուեն:

—Բագուի պարսից հիւպատոսը մի վագոն ալիւր է ուղարկում Շուշի սովեալ մուսուլմանների համար:

ՌՈՒՍԻԱ

— Մոսկուայում լուր է տարածուած, որ կարգադրութիւն է եղել զեմստվոյի գրքերի պահեստից գրաւեն վերջին երեք ամսուայ ընթացքում լոյս տեսած բոլոր քաղաքական հրատարակութիւնները:

—Ադմինիստրացիայի կարգադրութեամբ, ինչպէս հաղորդում է «Молва» լրագիրը, ոստիկաններն ամէն գիշեր բազմաթիւ մարդիկ են ձերբակալում Մոսկուայում, որոնք 12 ժամից յետոյ են դուրս գալիս: Խախտելով ընդ.-նահանգապետի կարգադրութիւնը՝ նրանք պատասխանատուութեան են ենթարկւում և պարտաւոր կլինեն մեծ դրամական տուգանք վճարելու: Ներկայումս մինչև 200 այդպիսի արձանագրութիւն կայ կազմուած:

— Անձի անձեռնմխելիութեան մասին նոր օրինագիծ է առաջարկուած պետական խորհրդարանին, որ մօտ ապագայում քննութեան է առնելու այդ օրինագիծը: («Мол.»).

— Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են, որ փոխ-ծովակալ Բիրիլևի հրաժարականն անխուսափելի է:

— Լուր է տարածուած, որ գրաֆ Իգնատևը վճռել է հրաժարուել պետական գործունէութիւնից և պիտի բաւականանայ պետական խորհրդարանի անդամի դերով: Վերջին ժամանակներս գրաֆ Իգնատևը պարզ խօսում էր գր. Վիտտէի գործունէութեան դէմ:

— Փոքրենական կոմիտէի կարգադրութեամբ գրաւման են ենթարկուած «Щаяцы» և «Книжка за книжкой» հրատարակութիւնների առաջին համարը: Ոստիկանութիւնը խուզարկել է այն տպարանները, ինչ տեղ տպւում էին յիշեալ օրագրերը, և բռնել տարել է բոլոր օրինակներն ու ձեռագրերը:

—,,Нов.''-ն հաղորդում է, որ ներկայումս գրաֆ Վիտտէի մօտ խորհրդակցութիւններ են տեղի ունենում յունուարի 9-ից յետոյ կառավարութեան հետևելիք քաղաքականութիւնը նախագծելու նպատակով. այդ միևնոյն առիթով ,,Пет. газ.''-ն հաղորդում է, որ յունուարի սկզբներում վճռուած է եղել վերջ տալ խիստ միջոցների գործադրութեան, և թէ քաղաքագէտներից ոմանց այդ ուղղութեան վրայ տատանումներ են եղել: Յաւանք:

—Պետերբուրգի դատական պալատի երդուեալ հաւատարմատարի խորհուրդը մի պատճառաբանուած բողոք է մշակել Տամբովում զինուորական ատեանի նիստի ժամանակ երդ. հաւատարմատար Կալմանովիչի ձերբակալման դէմ: Բողոքագիրն ուղարկուած է ներքին գործերի ու արդարադատութեան մինիստրներին:

—Ներկայումս պետական խորհրդին մատուցուած է մի նոր օրինագիծ, որը վերաբերում է անձի անձեռնմխելիութեան: Վճռուած է օրինագիծը քննութեան առնել անմիջապէս: Р. В.

— Վերջացել է գիւղական համաժողով, ուր որոշում է կայացուած բօյկոտ հրատարակել թէ Պետ. Դումայի և թէ ընտրութիւնների դէմ: Համաժողը գումարած է եղել Պետերբուրգի շրջակայքում և դրան մասնակցելիս են եղել մեծ թւով պատգամաւորներ: «Вег. Nor.

—Համաձայն ,,Р. В.''-ի հաղորդածի ըստ Մոսկուայի հասարակաց գերեզմանատան տուած տեղեկութիւնների, ուղղափառ ու այլադաւան, ընդ ամենն այդ գերեզմանատնն սպանուած ու ստացած վէրքերից, երկու սեռից թաղուած են 454 հոգի: Այդ թւի մէջ չեն մտնում Մոսկուայի շրջականերում վնասուածները, որոնք թաղուած են գաւառի գերեզմանատանը: Սպանուածներից ոմանք ճանաչուած են ու թաղուած են եղբայրական գերեզմանատներում:

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Օդեսայի ընդ.-նահանգապետ գեն. Կարանգոզովը հրատարակել է հետևեալ կարգադրութիւնը մամուլի մասին.

Պատերազմական դրութեան մէջ յայտարարուող տեղերի վերաբերեալ կանոնադրութեան 19 յօդ. 1, 2 և 14 կէտերի համաձայն ես որոշեցի. 1) դադարեցնել Օդեսայում հրատարակուող „Народная Справа" լրագիրը, քանի տեւում է պատերազմական դրութիւնը և 2) արգելել Օդեսայում լոյս տեսնել երգիծաբանական „Гудакъ", „Сигналъ", „Вампиръ, „Буреломъ" թերթերի և եբրայական բարբառով լոյս տեսնող «Տելեգրաֆ» լրագրի հատով վաճառումը հասարակական անդորրութեան համար նրանց վատ ուղղութեան պատճառով:

Առաջ բերելով այս կարգադրութիւնը, «Молва» լրագիրը իր կողմից աւելացնում է.

Եթէ Օդեսայի համար ինչը գեներալ Կարանգոզովն արգելում էր, այն ժամանակ Օդեսայի համար էլ ուրիշ միջոցներ պէտք չէին լինիլ:

Այդ նկատողութիւնը ոչ միայն Կարանգոզովին է սազում, այլ և համարեա բոլոր ընդ.-նահանգապետներին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսական յեղափոխութեան արձագանքներ. — Ռուսիայում ամբողջ մի տարուայ ընթացքում կատարուած հսկայական դէպքերը, յեղափոխական հրաձգութիւնները չէին կարող չազդել արտասահմանեան երկրների ծայրայեղ կուսակցութիւնների գործունէութեան վրայ: Այդ արձագանքներն զգացւում են Գերմանիայում, և դրան ապացոյց կարող են ծառայել Բեռլինում տեղի ունեցած վերջին ցոյցերը: Իսկ Իտալիայում, հակառակ ոստիկանութեան դրած արգելքներին, մի քանի գլխաւոր քաղաքներում տեղի են ունեցել սոցիալիստական միտինգներ՝ ռուսական յեղափոխութեան նկատմամբ իրենց համակրութիւնն արտայայտելու համար: Մի քանի տեղեր ցուցարարներն ընդհարումներ են ունեցել զօրքի ու ոստիկանութեան հետ:

Պարսկաստանի սահմանադրականն.— Ռուսական լրագիրները խիստ հետաքրքրական տեղեկութիւններ են տալիս Պարսկաստանում վերջին օրերի ընթացքում կատարուած ինչ-որ քաղաքական փոփոխութեան մասին: յունուարի 8-ին (հ. տ.) Թեհրանում հազարի չափ վաճառականներ ու մոլլաներ ի մի են համախմբւում և մի բողոքագիր խմբագրում շահի կառավարութեան դէմ և ցոյցերով ուղղւում են դէպի քաղաքին մօտ նուաղ Շահ-Աբդուլ-Ազիմ գիւղը: Շահը, չկամենալով անկարգութիւնների ու արիւնհեղութեան տեղիք տալ, ցուցարարների հետ բանակցութեան է մտնում: Բանակցութիւնները հասցնում են ցանկացած եզրակացութեան: Վճռուած է հաստատել մի տեսակ պատգամաւորների պալատ, որ կազմուած պէտք է լինի հոգևորականութեան, առևտրականների և հողատէրերի ներկայացուցիչներից: Ժողովը պէտք է բացուի շահի նախագահութեամբ արդարադատութեան պալատում: Պետական այդ նորահաստատութիւնը պէտք է ունենայ օրէնսդրական ու վարչական իրաւունքներ: Պէտք է հրատարակուի հողատէրերի հաւասարութիւն օրէնքի առաջ: Հաւանաբար նախկին սիստեմը միանգամայն պէտք է վերացուի: Թեհրանի նահանգապետը, որ ժողովրդականութիւն չէր վայելում, հրաժարւում է իր պաշտօնից: Երկիւղ կայ, որ ժողովրդի ներկայացուցիչները պահանջեն հեռացնել Բելգիայի պաշտօնատարներին ու մաքսային մինիստր Նոուսին:

Ամէն մի բարեփոխութիւն, յառաջադիմութիւն դէպի բարին որքան գնահատում է, երբ կայ կամք ու ցանկութիւն, այսինքն այն, ինչ որ պակասում է մեր երկրին:

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

19 յունուարի

ԲԵՐԴԻՉԵՒ, 19 յունուարի.—Երկաթուղու կայարանում պտտը վայր բերելիս յափշտակուած է արքունական մի պայուսակ, որի մէջ կար 20,000 րուբլու պտտային մարկ:

ԼՈՆԴՈՆ.—Զինուորական մինիստրը գեն. Մորիսից բացատրութիւն պահանջեց հեռագրում լոյս տեսած իր մի զրուցատրութեան մասին, որի ժամանակ Մորիսն այն համոզումն է յայտնել, թէ Գերմանիայի կողմից Անգլիայի վրայ յարձակւում գործելու դէպքում Անգլիան զօրաբանակ կը հանէ Դանիա, որը Ռուսիայի և Անգլիայի հովանու տակ հանգիստ կերպով թոյլ կը տայ այդ բանը, յետոյ անգլիական զօրաբանակն յառաջ կը խաղայ. Ճապոնիան նոյնպէս պէտք է պատերազմական գործողութիւններ սկսէ Գերմանիայի դէմ: Մորիսը զինուորական մինիստրին ասաց, որ իր հայեացքները հաղորդուած են խեղաթիւրուած կերպով. նա ամենևին թշնամական մտքով չի խօսել բարեկամ պետութեան վերաբերմամբ:

ԲԵՐԼԻՆ.—Վիլհելմ կայսրը հանգուցեալ Խրիստիան թագաւորի յիշատակը յարգելու համար հրամայել է, որ զօրքի սպաները սգոյ նշան կրեն երեք շաբաթուայ ընթացքում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Սենատում վրաց եպիսկոպոսների և էքզարխի մասնակցութեամբ սկսուեցին առանձին նիստեր վրաց եկեղեցու անկախութեան խնդրի մասին:

Բացուեց զինուորական-նահանգական դատարանի նիստը դատելու համար զինուորական-ելեկտրոտեխնիքական դպրոցի ռոտայի 126 զինուորի, որոնք մեղադրւում են անկարգութիւններ սարքելու համար: Դատը կտեւի մի քանի օր:

ՊՈԼՏԱՒԱ.—Առաւօտեան տարածանելով սպանուած է նահանգական վարչութեան աւագ խորհրդական Փիլոնով ծառայութեան գնալիս: Չարագործն անյայտացաւ: Հանգուցեալը վերջին ժամանակս շրջում էր հինգ գաւառ, զինուորական ոյժի օգնութեամբ դադարեցնելով գիւղական անկարգութիւնները:

ԼՈՆԴՈՆ.—Լրագրների ասելով, անգլիական և ճապոնական կառավարութիւնների միջև համաձայնութիւն է կայացել, որի զօրութեամբ ճապոնական մի խումբ սպաներ կուղարկուեն հնդկական զօրաբանակն ուսումնասիրելու համար Հնդկաստանի հիւսիս-արևմտեան սահմանը, իսկ անգլիական մի քանի սպաներ կուղարկուեն Ճապոնիա ճապոնական զօրաբանակի հետ ծանօթանալու համար:

ԼՈՆԴՈՆ.—,,Տայմս''-ին հաղորդում են Ալժեզիրասից, որ յունուարի 17-ին Մարոկկոյի բոլոր զօրքերը երկու թնդանօթով մեկնեցին կառավարչական շրջանաւով դէպի Մարշէկ:

ՄՈՍԿՈՒԱ.— Հոկտեմբերի 17-ի միութեան կեդրոնական կոմիտէը հաղորդել է Մոսկուայի բաժանմունքին, որ փետրուարի 8-ին նշանակուած է միութեան բոլոր բաժանմունքների պատուիրակների համաժողովը, որին մասնակցելու են նաև այն բոլոր կուսակցութիւնների պատուիրակները, որոնք կըյարեն այդ միութեանը:

ՄՈՍԿՈՒԱ. Թոյլատրուած են Դումայի ընտրութիւններին մասնակցելու քաղաքային ձեռնարկութիւնների բանուորները: Տեղի ունեցաւ վաճառականների, ազնուական և պրոֆեսորական դասերի բազմաթիւ գործիչների խորհրդակցութիւնը: Վճռուած է հիմնել նոր հաստատութիւն, «Անկախների կլուբ» անունով, որի սկզբունքներն են—սահմանադրական միապետութիւն, ընդհանուր ընտրողական իրաւունք և երկպալատեան սիստեմ: Կլուբը պէտք է ունենայ իր շաբաթաթերթը՝ խմբագրութեամբ Կիևի պրոֆեսոր Եւգենիյ Տրուբեցկոյի. վճռուած է նմանապէս և քաղաքական կուսակցութիւն, որը միացնի «Հոկ. 17-ի Միութեան» ձախ թևը սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան աջ թևի հետ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ծխախոտի յանձնաժողովի խորհուրդը կածրեց յայտնեց բոլոր տեսակ սիգարներն ակցիզի յաւելումից ազատ պահելու մասին:

ՍՈՒԽՈՒՄ. — Վերջացաւ շրջանի հանդակային համաժողովը, որը ցանկութիւն յայտնեց վրական եկեղեցուն տալ անկախութիւն: Շրջանում ամենուրեք հանգիստ է: Աբխազ ժողովուրդն իրեն զսպուածու է անբասիր պահում:

ԿՈՍՏՐՈՄԱ.—Շրջանային դատարանը, քննութեան առնելով «Костромск. Листокъ» լրագրի խմբագրի գործը, նրան յանցաւոր ճանաչեց ժամանակաւոր կանոնները խզած լինելու մէջ և դատապարտեց 4 ամսուայ բանտարկութեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Պաշտօնական լրագրներից ոմանց մէջ լոյս տեսան տեղեկութիւններ «Ռուսական ժողովրդի միութեան» պատգամաւորութեան Նորին Կայսերական Մեծութեան կողմից ընդունուած լինելու մասին: Ի նկատի ունենալով որ դրանով գիծւում է գրաքննական օրէնսդրութեան պատժական մասի 1024-րդ յօդուածը, որով արգելւում է, առանց պաշտաճաւոր թոյլատւութեան, տպել Թագաւոր Կայսրի անձնական գործունէութիւններին: Նրա բերանացի արտասանած խօսքերին և կամ Նորին Մեծութեան ուղղուած ճառերին վերաբերուած յօդուածները, յանցաւորները կենթարկուին դատական պատասխանատուութեան:

ՄԻՆՍԿ.—«Հոկտ. 17-ի Միութեան» բաժանմունքը դիմում է արևլ իրենց ծրագրով այդ միութեան մօտ եղող կուսակցութիւններին՝ միանալու իր հետ, միասին աշխատելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Մոգիլևի փոխնահանգապետը գրաֆ Վիտտէին հեռագրում է. «Հոմելում հրդեհները վերջացան: Դրանք առաջացել էին պրիստաւի օգնականի սպանութեան առիթով և յեղափոխականների դէմ գրգռուած զայրոյթից: Այրուած խանութներում ու տներում եղել են պայթումներ: Ռումբեր ձգուեցին, ատրճանակներ արձակուեցին, որոնց զօրքը պատասխանեց հրացանաձգութեամբ: Վնասները հասնում են 3 միլիոնի:

ՌԱԴՈՄ. 17 յունուարի. — Շնորհիւ եռանդուն միջոցների, նահանգը խաղաղւում է: Բազմաթիւ ձերբակալութիւններ են կատարուած: Ստրաժայում բռնուած է պատերազմական կազմակերպութիւն: Մի քանի կալուածքներ, ուր առօրինի ժողովներ էին լինում, յարքունիս են գրաւուած: Ընդ. նահանգ. Թէքելը ճանապարհորդում է ամենաանհանգիստ գաւառներ: Գիւղացիք, որոնց վարչութեանց մէջ վանուած էր ռուսաց լեզուն, հրնազանդութիւն են արտայայտում, յայտարարելով, որ գործում էին յեղափոխականների ազդեցութեան ներքոյ: Հարկերը նորից սկսում են վճարել:

ԼՈՆԴՈՆ. — (Րէյտեր): Թագուհին երեկ Կոպէնհագէն կը մեկնի: Թագաւորի մեկնելու խնդիրը կախուած է Խրիստիան արքայի թաղման օրից, որովհետև Էդուարդ արքան պէտք է փետրուարի 6-ին Լոնդոն լինի պարլամենտի բացմանը:

ԿԱԼՈՒԳԱ.— Կալուգայի գաւառի Լոմոտանովա գիւղում ուսուցչի բնակարանում գտնուած է տպարան, բանուորների խորհրդի պատգամաւորների թռուցիկների շարուածքով: Ուսուցիչը կալանաւորուած է:

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶ.— Երեկ արտիլերիական հրձիգութեան է ենթարկուած Սալուգուրդան գիւղը, որի բնակիչները հրաժարւում էին իշխանութեանը յանձնելու Օսէթիայում դեկտեմբերի վերջերին աւերմունք յառաջ բերողների գլխաւորներին: Արձակուեց վեց ռումբ:

ՀՌՈՄ.— (Ստեֆանի) Պատգամաւորների ժողովում մինիստր-նախագահ Ֆորտիսը յայտնեց, որ նոր կաբինետը դեռ չէ նշանակւում երկրի քաղաքականութեան փոփոխութիւն: Իտալիան հաւատարիմ է մնում իր դաշնակիցներին: Երկրի ֆինանսական դրութիւնը հնար չէ տալիս հարկերը կրճատելու: Անհրաժեշտ է ձեռներպել երկաթուղիները, պետական նպատակները ի նկատի առած, միացնել երկամեայ զինուորական ծառայութիւն, միաժամանակ աւելացնելով զինուորական ծառայութեան ենթարկուող անձանց թիւը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Վերջին ժամանակներս ահագին քանակութեամբ թղթադրամ է մնում պետական բանկի դրամարկղներում. ընդ նմին յունուարի 8-ին դրամարկղներում եղած թղթադրամների գումարը հասնում էր 104 երեք տասներորդական րուբլու: Ուստի և բանկին անհրաժեշտ համարեց հանել շրջանառութիւնից 25 միլ. ր. թղթադրամ: Այս կարգադրութիւն իրագործուել է յունուարի 17-ից: Այդպիսով շրջանառութեան թողնուած թղթադրամների քանակութիւնը նուազեց՝ 1290 միլիոն րուբլուց մինչև 1265 միլիոնի:

ՌԻԳԱ.— Այսօր 8 ժամին առաւօտուայ յարձակումն է գործուել խուզարկու բաժանմունքի վրայ ոստիկանութեան վարչութեան մէջ քաղաքի կեդրոնում, ուր պահւում էին վերջերումս կալանաւորուած նշանաւոր քաղաքական յանցաւորներ: Յարձակուողները մտան խուզարկու բաժինն իբրև խնդրատուներ, ծանր վիրաւորեցին օրապահ ոստիկանին և մի պահապան զինուորի. միւս պահապանին սպառնալով սպանել, ապա ներս թափուել են բանտարկեալների սենեակը և տարել իրենց հետ հինգ քաղաքական նշանաւոր յանցաւորների: Յարձակմանը մասնակցում էին կանայք: Ոստիկանատան վարչութեան մէջ հսկող կէս վաշտ զինուորները ոչ մի օգնութիւն չկարողացան տալ արագ և անըսպասելի յարձակման պատճառով:

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶ.— Պոկրովսկու կեանքի դէմ փորձ անելու և հրէից աղօթարանի կոքին 6 ատրճանակ գտնելու համար քաղաքի հրէայ ազգաբնակութիւնը 3000 րուբ. տուգանքի է ենթարկուած: Պատգամաւորները, որոնք գնացել էին խնդրելու ներել տուգանքը, միջոց ստացան մինչև փետրուարի 1-ը: Յունուարի 9-ին Մարինպոլի գիմնազիոնի աշակերտները հրաժարուեցին պարապելուց և միտինգ կազմեցին, որի հետևանքն եղաւ մի քանի աշակերտների արձակումն և երեքի կալանաւորումը: Յունուարի 10-ին պահանջեցին կալանաւորների ազատումն և արձակուածների նորից ընդունուելը: Այդ ժամանակ շրջանի վերատեսուչը կոչեց կազակներին: Աշակերտները ցրուեցին:

ՍՈՍՆԻՑԻ.— Սոսնիցի զեմստվային ժողովը միայն համակրելուեց հոկտեմբերի 17-ի միութեան և որոշեց մատուցանել Թագաւոր Կայսեր ամենահպատակօրէն ուղերձ:

ՎԼԱԴԻՎԱՍՏՈԿ.— Նոյեմբերի կէսից գործադուլի ենթարկուած հեռագիրն ահագին ծառայութիւն արեց յեղափոխական քարոզչութեանը Հեռաւոր Արևելքում, որը երկու ամիս կտրած էր բոլոր յարաբերութիւններից կենդրոնի հետ:

20 յունուարի

ՎԱՐՇԱՒ, 18 յուն.— Պատերազմական դրութեան 12 յօդ. համաձայն, այսօր մահուան են դատապարտուել հրացանի բռնելով հինգ հրէայ, որոնք պատկանել են անիշխանական պատերազմական կուսակցութեան:

ԱԼԺԵԶԻՐԱՍ.— (Հաւաս) Մարոկկոյի կոնֆերենցիայի խմբագրական մասնաժողովն զբաղուած է հարկերի վերաբերեալ խնդիրներով: Պատգամաւորներից շատերը գժգոհ են, որ ստիպուած են զբաղուել այդպիսի չնչին և զուտ տեխնիքական խնդիրներով: Պետութեանց գլխաւոր ներկայացուցիչները մասնաւոր խորհրդակցութեանց միջոցով, նախապատրաստում են համաձայնութիւն ուրիշ խնդիրների վերաբերեալ, մասնաւոր կառավարչական աշխատանքների և պետական բանկի:

ՌԻԳԱ.—Այսօր առաւօտեան ժամը 7-ին Դվինսկի մօտ խռովարարները յարձակուեցին 5 քաղաքապահ ոստիկանների վրայ, որոնցից երկուսը ծանր և մէկը թեթև վիրաւորուած են: Յարձակուողներին հրացանաձգութեամբ պատասխանելով քաղաքապահ ոստիկանները վիրաւորեցին ճանապարհին հանդիպողներին, որոնք կարողացել էին թագնուել: Ն-րեկոյեան ծանր վիրաւորուած է ոստիկանի: Ոստիկանապետ Գերտինգը թողնում է պաշտօնը:

ՄԻՏԱՒԱ, 19 յուն.—Կուրլեանդիայի նահանգի 225 աւաններում վերականգնած է օրինաւոր կառավարութիւն.

ԲԱԹՈՒՄ.—Բերդապահի հրամանով կազմուած է ժամանակաւոր զինուորական դատարան:

ՎԱՍԻԼԿՈՎ.—Նահանգապետն արգելեց բոլոր լրագրների ու ամսագրերի հատով վաճառելը:

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՍՓԱՆԴԱՐ ՍՓԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Սրանով յայտարարում է, որ սոյն տարուայ յունուարի 27-ին, օրուայ ժամը 12-ին, աճուրդ է նշանակուած կապալով տալու կոյուղիների շինութիւնը հետևեալ փողոցներում:

1) Հայոց բազարում և Զախարեան Նրբա փողոցում

20 սաժ. բետոնի խողովակ 0,375×0,28

38 սաժ. ,, ,, ,, 0,25×0,16

3 դիտողական հոր:

2) Կոչուբեան և Բեհբութեան փող. 98 սաժ. բետոնի խողովակ 0,25×0,16

3 դիտողական հոր:

Գրաւոր յայտարարութիւններ, որոնց մէջ ցոյց տրուած պիտի լինին վերոյիշեալ աշխատանքների արժէքը պէտք է փակ ծրարներով տրուեն մինչև սոյն տարուայ յունուարի 27-ը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմաններին տեղեկանալ քաղ. վարչ. շինարարական բաժնում ամեն լի օր ցերեկուայ ժամը 1—3.

(102) 2—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ծանուցանում է, որ յունուարի 25-ին, օրուայ ժամը 1-ին, քաղաքային տանը նշանակուած է աճուրդ՝ փողոցի մայթերը, խճուղիները և փողոցի երկու կողմը միացնող գծերը վերանորոգելու համար քաղաքի զանազան մասերում:

Աճրդի պայմանների մասին կարելի է տեղեկանալ քաղ. վարչութեան շինարարական բաժնում ամեն օր՝ ցերեկուայ ժամը 12—2-ը:

(103) 3—1

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1906 ГОДЪ

на ежедневную, политическую, общественную и литературную газету

НОВОЕ ОБОЗРѢНІЕ

(23-Й ГОДЪ ИЗДАНІЯ),

ВЫХОДЯЩУЮ ВЪ ТИФЛИСѢ БЕЗЪ ПРЕДВАРИТЕЛЬНОЙ ЦЕНЗУРЫ.

Подписная плата для городскихъ подписчиковъ УМЕНЬШЕНА.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Для городскихъ подписчиковъ:		Для иногородныхъ подписчиковъ:	
На 12 мѣсяцевъ	6 руб.	На 12 мѣсяцевъ	7 руб.
„ 6 „	3 р. 50 к.	„ 6 „	4 руб.
„ 3 „	2 р. —	„ 3 „	2 р. 50 к.
„ 1 „	— 75 к.	„ 1 „	1 руб.

За границу 14 руб. въ годъ.

(ф). 3—3.